

կոլիսկոպումն՝ ի դիմաց Մերոց յայցելութիւն և ի նուիրակութիւն կողմանցդ Հնդկաստանի որ եկեալ Հասեալ Տերամբ առ ձեզ միսիթարեացէ՝ զձեզ շնորհիւ Հոգւոյն Արքայ՝ քարոզելով զհանն կենաց, սնուցանելով զբանասոր հազառ քառս համբոսեան և ի վայրի դարարոջ խաղաղութեան, յառաջագիմութեան և ազգաշինութեան, Աստուածային սիրոյ և ուղղութեան հաւատոյ Հայաստանեայցս առաքելական սուրբ եկեղեցւոյ անօրինելով զպէտարս և զկարիս եկեղեցեաց և զպրոցաց ձերոց, ամենեցուն ըստ իւրաքանչիւրոցն հոգեւոր կարօտութեանց մատուցանելով զխնութիւն և ի լրումն ամենայնի մատակարարելով զառարեալ ի Մէնջ զորբալոյս Միւսօնն յեկեղեցիս վիճակիդ:

Արեւի սրգիք Մեր ի Տէր, գիտէք զի պանծացեալ Հարբն Ձեր սրտաբեկ առջորմամբ պանդխանեցան ի գրկաց սիրելի Հայրենեաց իւրեանց յայդ երկիր հեռաւոր բայց սիրար և իղձք նոցա, հոգւովք և մօտք յարածամ ի Հայաստան և ի Ա. Էջմիածին էին, նոյն և յարժանաւոր շառախղոյ նոցանց գոյ սիրա հայրենասէր և ազգասէր քերթնաւորութիւն կրօնի Հայաստանեայցս առաքելական եկեղեցւոյ և փափագ յառաջագիմութեան պայծառութեան և կենդանութեան փառանդի ազգիս նախանձախնդիր հանդիսանալով միշտ հայրենի օրինաց, կանոնաց, աւանդութեանց, ծիսից և պաշտամանց ի մէջ օտարաց, քերթնաւորեամբ գունդ օրծէր անմուսաց պահել զմայրենի լեզու մեր, սրբութեամբ աւանդելով սրբւոյ և յաջորդաց Ձերոց, ընդ արտարին գիտութեանցն, ի պատիւ Հայաստան ազգիս և եկեղեցւոյս առաջի ալոյց ազգաց և պետութեանց փայլելով առաքինութեամբ, օրինակ բարեաց յաչս ամենեցուն: Աւտի և Մէք զհայրական պարտիս հատուցանելով յորդորեմը զսիրելի սրգիսց Մեր, բարենախանձ եռանդեամբ Ձերով ի բաց թոթափեցէք զամենայն հնարս չարին և զամենայն կիրս վնասակորս, և ի բաց խորշեցարուք յօտարամատարմանց բանաբկոյին, սիրե-

ցէք զմիմեանս և զօտարս իրբն զընկերս, զխաղաղութիւն կաշխիւր և զսէր առանց կեղծի առ միմեանս և առ ամենայն մարդիկ: Պահպանեցէք զհառարակօգուտ և զազգօգուտ հաստատութիւնս, խնամեցէք զազքաւարս և զօրբս և մի անտարբեր ակամբ հայեալք ի տուն բարդական փրկութեան ազգին, ի Սիօն մեր—ի Մայր Աթոս Ա. Էջմիածնի:

Այլ և լիպոյս եմք, զի ըստ հայրենասուրբ բարեպաշտութեան Ձերում արժանաւոր հիւրասիրութեամբ ընկալլիք զԱրքազան Կապի Արքեպիսկոպոսն, զԱռաջնորդն Ձեր, իրբն զփախանորդ և զնուիրակ Մեր և իրբն զպաշտօնեայ Փրկին մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Արդ և Մէք օրհնեմք զՁեզ զամենեօն սրբաւեանդն փափագանոր, և ազալեմք զամենախնամն Աստուած, զի հովանաւորեալ բնակեցի ի սիրտս և ի հոգիս ձեր, պարգեւեցէ ձեզ զյաջողութիւնս յամենայն գործս Ձեր բարիս, պահեցէ զձեզ ազատ յամենայն չար պատահարաց և շնորհեցէ սիրտ սուրբ և հոգի ուղիղ զբարին, զհամոյն և զօգտակարն խորհել և գործել, և լուսաւորեցէ զհոգիս ննջեցելոց Ձերոց և արժանի արտացէ երկնից արքայութեանն:

Ազջ լեւուք և օրհնեալք յերկնասր Հօրէ մերմէ և ի Մէնջ, Ամէն:

յամբ Տեառն 1894
Յուլիս 26
Եւ ըստ տունարիս մերում
ԱՅՈՒԳ Հրտաից ի
Համար 1136
Մարտառեան Մայր Աթոս Ա. Էջմիածնի
Ի Վաղարշապատ:

(Միակամին ստորագրելով է)
ՄԱՐՏԻՉ ԿԱԹՈՐԳՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱԶԳԱՅԻՆ

Ամիս 11-ին Խաչվերացի տօնին առաջաւան ժամը 8-ին Գ. Հոգ. Անճարանի երախայրիք սարկաւաղները համախմբուելով Ս. Տաճարի զանգակատան մօտ հանդուցեալ Գեօրդ Գ. Կաթուղիկոսի զերեզմանի շաւրջ, հոգեհանգիստ կատարեցին միարանութեան մի քանի կաթուղիկոսներ և փարզադեաներիս այլ և հոգ. Անճարանի ուսուցիչներ և ուսանողի

հետ: Հոգեհանգստից յետոյ շնորհ. Կարապետ սարկաւազ Տէր Մկրտչեանց արտասանեց մի համառօտ ծառ, որով յիշեց երախտազիտական զգացմունքներ թէ իւր և թէ իւր ընկերների կողմից առ Գէորգ Գ. ի յիշատակն իւրեանց մօտալուտ ձեռնադրութեան առթիւ: Սարկաւազներն՝ որքան էլ տխուր լինէին՝ որ հոգ. ձեռնարանի սաների այդ նախընծայ ձեռնադրութիւնը կատարուելու էր Գէորգ Գ. ի մարմնաւոր աչքից անտես, սակայն և այնպէս ուրախ էին, որ իրազործուում էր հանգուցեալ Հայրապետի բաղձանքը Նորին Վեհափառութեան Հայոց Հայրիկի գահակալութեան օրով:

Ապա Ս. Գայիանեան վանքում հանդիսաւոր պատարագ մատոյց Բարձր. Սրբազան Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանց, որ Նորին Վեհափառութիւնից յանձնարարուել էր ձեռնադրելու: Պատարագին ներկայ էին շատ միաբաններ, հոգ. ձեռնարանի ուսուցիչներն ու աշակերտները, նաև բաւական մեծաթիւ ժողովուրդ: Այդ հանդէսը պատուեց իւր ներկայութեամբ Նորին Վեհափառութիւնը, մընաւոր վանքում գրեթէ մինչև հանդէսի վերջը: Նորին վեհափառութեան հայրական օրհնութեան արժանացել էին սարկաւազներն արդէն նախընթաց երեկոյեան, ստանալով և հարկաւոր խրատներ իւրեանց ապագայ կեանքի և գործունէութեան համար:

Ձեռնադրուող սարկաւազներն էին եօթ հոգի, որոնցից միայն վեցն էին հոգ. ձեռնարանի շրջանաւարտ սաներից: Նորին Վեհափառութիւնը բարեհաճել էր ուշադրութիւն դարձնել նոյն իսկ նոցա անունների վրայ, ըստ որում ձեռնադրուելով՝ ստացան նոքա հետեւեալ անունները.

Շնորհ. Կարապետ սարկաւազը մնաց նոյն անունով.

- « Ստեփան սարկաւազը—Բենիկ արեղայ »
- « Սողոմոն սարկաւազը—Կոմիտաս »
- « Յուսիկ սարկաւազը—Յուսիկ »
- « Ղեռնդ սարկաւազը—Եղնիկ »
- « Տիգրան սարկաւազը—Տիրայր »

Պոցա հետ ձեռնադրուեց և Վահան սար-

կաւազ Ռատեանց, որ եկել էր Ղարաբաղից, բերելով իւր հետ շատ հնու թիւններ և զրչազիրներ, որ ստացաւ Խաչիկ անունը:

Ձեռնադրութեան հանդէսը շատ շքեղ անցաւ, որից յետոյ արժ. հայրերը ելան և զիմեղով դէպի հանգուցեալ Պալասանեանի դերեղմանը, կատարեցին մի լսիկ հոգեհանգիստ:

Միւս օրը այցելեց նոցա Բարձր. Սրբազան Մեսրոպ Արքեպիսկոպոսն և խօսելով մի քանի հայրական խրատներ, յայտնեց որ երեկոյեան կստանան նորընծաները կուսակրօնութեան վեղարը:

Այս վերջին հանդիսին ևս բարեհաճեց ներկայ լինել Նորին Վեհափառութիւնը:

Այնուհետև նորընծաներն իրաւունք ստացան վերադառնալու իւրեանց խուցերն, որտեղ պէտք է պահեն սահմանուած քառասունքը:

Շատ ուրախալի է, որ 20 երկար տարիներից յետոյ վերջապէս Ս. Իջմիածնի հոգեւոր ձեռնարանը տալիս է իւր երախտազի կրօնաւորները շրջանաւարտ սաներից, որոնցից մէկն արժ. Կարապետ արեղայ ստացել է աստուածաբանական համալսարանական կրթութիւն:

Կուրախանայ հանգուցեալ մեծ Հիմնադրի հոգին, ուրախ է և դպրոցախնամ հայրապետն ինչպէս բարեհաճեց արտայայտել իւր բանախօսութեան մէջ: Այսպիսով ճշգուռում է Պօղոս առաքեալի խօսքն և այստեղ, « Ես անկեցի Վազդոս ջուր ետ, այլ Աստուած անցոյց »: « Որ անկեացն և որ զջուրն ետ՝ մի են, բայց իւրաքանչիւր որ զիւր վարձս առնուցու ըստ իւրում՝ վաստակոց »:

Արժանապատիւ նորընծաները բարեշնորհ. Մահապետ վարդապետի տեսչութեան և Սրբազան Օրմանեանի ուսուցչութեան օրով ընծայուածներն են: Տայ Աստուած, որ արժ. հայրերն իրագործեն Նորին Վեհափառութեան յոյսերն, այլ ևամբողջ ազգի եկեղեցասիրական ակնկալութիւնները: Տայ Աստուած, որ Ս. Իջմիածնի հոգեւոր ձեռնարանն այսուհետև զանէ պատրաստէ ճշմարիտ եկեղեցական-

ներ իւրեանց վայել կրթութեամբ և ուղղութեամբ: Բայց և տայ Աստուած արժ. նորընծաներին բարեպաշտօն գործունէութեան մշտավառ եռանդ և անարգել յաջողութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցու ծարաւի հօտին մէջ:

Կարգադէպ ուսուցանողի հարւը.

Շիրիմ, որ մեր բարերար Հօր նշխարներն ես ամփոփում: ահիւ և գողութեամբ ենք մօտենում քեզ այս վճռական խորհրդաւոր պահուն կրկնելու և երեքկնելու մեր ուխտը՝ ուխտ սրբազան հաւատարմութեան և անքակտելի հաստատութեան. դու մեզ վստահութիւն ներշնչիր մեծ մեծ պարտքերի մի այսպիսի ծանր լուծ քաղցր հեշտութեամբ մեր վերայ առնելու: Անձկան յարմար պանծալի անուն, որ ոսկեղէն տառերով մեր կրթութեան դրօշակի վերայ մակագրած՝ տարիներէ ի վեր մեզ ոգևորել, ուղղութեան ճանապարհով մինչև այս կէտն ես առաջնորդել, դու և այժմ կնիք եղեր մեր ուխտի համար, արթնուն յուշարար մնալով կեանքի ամեն քայլափոխումս թէ որոյ ոգւոյ ենք մենք զաւակ. այդ անուամբ զուարթանալք տաղնապի բոլորում: այդ անունից երկնչենք, երբ փորձանաց դեր գայթակղութեան կամ թուլութեան որոգայթ մեր առաջը լարէ, և ո՞վ է այն չուսուցանելու, որ սրբութեան քօղը կրել համարձակելով այդ անուան արատ բերելուց պիտի չփախչէ:

Այժմ Հայր, որ անշուշտ դիտում ես երջանիկների կայանքից մեր այս գումարումը թող խաղաղն բազմաշխատ գործերդ, փափագներդ լեցուած են. հեռատես խորհուրդներդ կատարումն ընդունած. Բո մեծ գործին արդիւնք, բազմապատիկ խնամոցդ տրիտուր, ահա Տիրոջ սեղանի առաջ ենք դնում մեր սրտերը, մեր հոգին, մեր ամբողջ կարողութիւնը, նորան լինի ամենը, նորա տան սպասաւորութեան սուրբ գործին նուիրած: Տկար են արգարե ու տարուբեր մեր սրտերն ու հոգին, յողորմ մեր մտքերը, անհաստատ մեր կամքը: ըստ ամենայնի դուզնաքեայ է և անարժան թերեւս մեր այս նուէր, սակայն ամենայն յօժարութեամբ բերած, օրհնիր մեր ուխտը և բարեխօս եղիր նորա առաջ, որ ոչինչը ինչ դարձնել կարող է, տկարը զօցացնել, անարժանը նուիրագործել և արժանի կացուցանել. նա տայ մեզ կարողութիւն սրբութեամբ սկսելու և կատարելու:

Հայաստանեայց Սրբազնագոյն Հովուապետի, մեր

մեծագոյն հայրապետաց արժաննոր յաջորդի ձեռքն ենք յանձնում մեր այս սրբազան ուխտի կնիքը, կրկնելով իւր առաջ ուխտ մտադիր հնազանդութեան. նա, որ տէր է ցպով և դաւազանաւ առաջնորդելու մեր սպասաւորութեան գործին, այլ որի աջու աչք գործվագութիւն հայր են խոստանում ամենքին, Անկեալ է նա և անհաղորդ մեր սրբազան ուխտին, որ այդ հայրական զթոյն Ահհուութիւնը գնահատել չի իմանայ և կմոռանայ երբէք կամակոր հպատակութեամբ պատրաստ գտնուել մեր Հոգեւոր Տիրոջ մէջ մի հրամանին, Հայոց Հայրիկը, որ ասես մեր երջանիկ նախնեաց շարքից է իջել, հայ կրօնաւորի տիպարը կենդանի օրինակաւ մեր առաջը նկարելու. որի սիրտը միշտ վառ է եղել հայ անուան սիրոյ կրակով, որի բերանում միշտ կենդանի է եղել սուրբ աւետարանի ճշմարտութեան խօսքը՝ նա թող ներշնչէ մեզ այն հոգին, որ մարդկանց հոգիները սիրով կապել, ճշմարտութեամբ ղեկավարել, սիրտէր ազդի հոգսերու ու վշտերի ծանրութեան ներքոյ ճերմկցած ալիք մեր երիտասարդական անձնապատանութիւնը մինչև դետին է խոնարհում: Ձեր պատկառելի վսեմութեան առաջ, Ձեզ ենք կամենում հետեւել հեզ և խոնարհ սրտով, ամբասիր ու բարեբեր մի կենաց առաջնորդ մեզ եղէք:

Օրհնեցէք մեզ և դուք, Սրբազան հայրեր, Ս. Եջմիածնի հնօրեայ միաբանութիւն, ներկայացուցիչ փառաւոր անցեալի և պահպան աւանդական սրբութեանց, որ այսօր կրկին նուիրագործութեամբ ի շարս ձեր գնել յօժարումէք մեր տհաս ոգիքը, ձեր առաջ ենք երեքկնում մեր ուխտը. յարգել անցեալը, ճշմարտութեամբ պահել նուիրական աւանդութիւնները, խոնարհել այն ամեն սրբութեան առաջ, որ մեր պաշտելի նախնեաց անուան ու գործի դրոշմն է կրում: օրհնեցէք և աղօթեցէք, որ այդ հայրերի շաւղովն ընթանալ նոր ուժով, հին բայց և միշտ նոր կենդանի, հարազատ և կենդանարար ոգին արծարծել կարող լինենք:

Հապա դու, Հայոց ժողովուրդ, որ այդպէս հետաքրքիր աչքերով դիտում ես մեզ և պիտ շարունակես դիտել ու քննել մեր իւրաքանչիւր քայլափոխը. որ անտուն անտէր գաղթականից սկսած մինչև ճոխ պալատների մէջ զուարճացող մեծատունը թշուառութեանց ու մոլորութիւնների մի ծով ես ներկայացնում: բռնում ես անհամար վերքեր, որոնց սպեղանի վշտեր, որոնց սփոփում պէտք է և մատով ցոյց ես տալիս. ահա մեր հովիւներն ու վարդապետները. ահա, ես ճանաչում եմ այդ հայուածքը, դարձուր, տանել չեմ կարող, նա հալում մաշում է իմ երիտասարդ հասակը, Տես ժողո-

վորդ, Հայի արին արցունքը թող լինի մեր ուխտի չորրորդ կնիքը. քո հառաջանքը երբեք դադար չապ մեղ թմրութեան անկողնի վերայ, ընդոտ վեր ելնենք, Վայենի նման աստանդական շրջենք, եթէ քո ցաւերը տեսնենք ու անտարբեր մնանք, ուղեկցիր և դու մեզ քո մտղթանքներով, լուսաւորչի Եստուածը չի նիրհում, նա քո աղաչանքն էլ կլսէ:

Եւ վերջապէս Դուք, ներկայացուցիչներ մեր ուսուցիչների և դաստիարակների, որ մեր մանուկ սրտերն ու մտքերը ղեկավարել էք, բարւոյ և ուղղութեան շաղի վրայ գրել վերջինը ձեզ եմք յիշում: Բայց ոչ ի յետինս, և դուք եղէք մեր ուխտին վկայ և աղօթեցէք, որ ձեր ցանած բարի սերմերը զարգանան և պտղաբերեն:

Իսկ դուք Գեորգեան ձեմարանի սիրասուն սաներ, մեր անդակից եղբայրներ, որ նոյն դաստիարակութեան շաղով ընթանում էք մեր ետեւից, նոյն Սասեաց հովն է և ձեր կուրծքերին զօրութիւն տալիս նոյն սուրբ տեղիք են իրենց հովանին ձեր վերայ ախոռւմ, այս աւերակների ոգին ձեզ այժմ տակաւին օրօր է ասում, անո՛ւշ այդ կազդուրիչ քունը, բարեկյանք թող լինի արթնութեան բոպէն, յո՛ւշ ձեզ այն ժամանակ այս պահուն խորհուրդը, Թո՛ղ շնորհաց Ս. Հոգին առաջնորդէ ձեր քայլերը և տայ իւրաքանչիւրին, ինչ որ արժան է և Իւր բարի կամեց տրամադրութիւնը, սակայն երբ ժամը հնչէ ու այս ուխտի կնիքը նաև ձեր առաջ բացուի: Ս. Եկեղեցու սպասաւորութեան գործին նուիրելու հրաւրէ. քայլեցէք անվախ, վստահութեամբ գըրէք ձեր ձեռքը մաճի վերայ և ետ մի նայէք, արտի Տէրը կհոգայ թէ ձեր և թէ իւր ցանքի մասին: Խույ՛ մի մնաք միայն այս ժողովրդի հառաչի համար, այս որբազան տեղեաց խորհրդաւոր լեզուն հասկանալ սովորեցէք: Այո՛, այդ լեզուն խօսէ Թո՛ղ այս ժամուն և մեր սրտերում: մեր շնորհատու մայր Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ դերագահ Աթոռ և լուսոյ խորան, թո՛ղ և մեր շուրջ շողայ այն լոյսը, որով յղիացած մեր երանելի նախնիք նահատակութեան ասպարէզ ելան, այդ լոյսը նուիրագործէ մեզ սրբութեամբ մտնեալու ահաւոր խորհրդոյն, քո սպասաւորութեան, քո վերաշինութեան գործի հաւատարիմ ծառայութեան արժանի շնորհքն ընդունելու: Երկնաւոր ճարտարագետ այս հրաշալուն տաճարի, Յիսուս, Անմահ խաչեցեալ... «Ո՞ տացէ ի Սիոնէ զփրկութիւն Իսրայէլի, ի դարձուցանել Տեառն զգերութիւն ժողովրդեան իւրոյ»:

«Զմի խնդրեցի ի Տեառնէ և զայն աղաչեմ, բընակել ինձ ի տան Տեառն զամենայն աւուրս կենաց իմոց»:

Հեաւեալ կիրակէ ամսիս 18-ին նոյն Ս. Գայիանեան վանքում հրամանաւ և ի ներկայութեան Աւհափառ Հայրապետի Սրբազան Գառնակերեանը սարկաւազ ձեռնադրեց զպիր Ռափայէլ Տէրունեանին ի միաբանութիւն Մայր Աթոռոյ: Շնորհունակ սարկաւազն իւր ուսումն աւարտել է Գուրգէնեան վարժարանում 1883-ին, և ի Տէր հանգուցեալ Սարպէյ Խորէն Սրբազանի մօտ աշակերտելով՝ զպրութեան 4 աստիճան ընդունած է: այնուհետեւ ուսուցչութիւն է արել Ռումինիայում: Պարսկաստանում և Ռուսաստանում իսկ այժմ Սորին վեհափառութեան Ղիսանի քարտուղար է:

Ամսիս 25-ը Ս. Գեորգայ աօնը շատ հանդիսաւոր էր Ս. Լըմիաճնում: Ճաշուայ ժամից յետոյ հոգեհանգիստ կատարուեց հանգուցեալ Գեորգ Գ. Աթուղիկոսի զերեզմանի վրայ՝ ներկայութեամբ միաբանների և Հոգ. Ճեմարանի սաների և ուսուցիչների, այլ և խուռն ժողովրդի: Հոգեհանգստից յետոյ հանդէսը փոխադրուեց Հոգ. Ճեմարանի բակ, որտեղ պէտք է կատարուէր նորա տարեդարձը: Ճեմարանի հիւսիսային կողմում պատրաստուած էր հանդիսի տեղը, այնտեղ դրուած էր հայրապետական բարձրագահ աթոռ, մի կողմը ամրին և երկու կողմերն աթոռներ:

Հանդէսը բացուեցաւ Բարձր. Սրբազան Մեսրոպ Արքեպիսկոպոսի նախագահութեամբ, որոյ շուրջ բազմեցան միաբանք, ուսուցիչք և պատուաւոր հանդիսականները, սաներն ու ժողովուրդը շրջապատեցին դոցա, Բարձր. Սրբազանը օրհնեց հանդէսն և խնայն երգեցիկ խումբը երգեց «Ո՛հ ինչ չքննաղ» երգը: Երգից յետոյ Ճեմարանի տեսուչ պ. Կ. Կոստանեանցը բարձրացաւ ամբիոն, սիրալիր ողջունեց հանդիսականներին և մի հակիրճ և ազդու բանախօսութեամբ զարժեց ունկնդիրներին միաքն ու հայեացքը դէպի Ճեմարանի ամբողջ կեանքն, ընթացքն և նպատակը: Նա սկսեց այն տեղից՝ թէ ի՞նչ

պիսի նեղ հանգամանքներում դառաւ երջանկայիշատակ Ղեորդ Ռ-ը Ս. Լժմիածնի զանձարանն և թէ ի՞նչպէս մեծամեծ զոհողութիւններով կանգնեց գիտութեան սաճարն այն ժամանակի երբ այդ տեսակ մէկ մեծ հաստատութիւն պահելը մի անկարելի բան էին համարում ուսումնականները չքութեան կամ պահապանութեան պատճառով: Փամանակն անցաւ և այժմ այդ հոյակապ շինութիւնը փոքր է ներկայ պահանջների նկատմամբ: օրէցօր աւելի և աւելի շատ աշակերտներ են ընդունուում և Նորին Վեհափառութիւնը մտահոգ է լինում՝ շինութեան ծաւալն ընդլայնելու համար: Յիշեց հանգուցեալ Հիմնադրի սահմանած նպատակն որ ձեմարանը իբրև ամենայն Հայոց ձեմարան՝ պէտք է ազգին տայ վարդապետներ, քահանաներ և Հայոց եկեղեցու ողով կրթուած ուսուցիչներ:

Ահա քսան տարի է, որ ձեմարանը մարդիկ է տուել ազգին, վերջերումս էլ բախտ ունեցանք տեսնելու աւաջին նորընծաները Ս. Լժմիածնում և «ես հաւատացած եմ որ ձեմարանը կմնայ յաւիտեան և կտայ իւր պըտուղները քանի կայ ազգն ու Ս. Լժմիածինը որոնք յաւիտեան կմնան» շեշտեց պատուէր. ապա նկատեց որ ժողովուրդը պարտաւոր է պահպանել Ս. Լժմիածնի այդ ճրագը մի և նոյն ժամանակ պէտք է ամենայն հետաքրքրութեամբ՝ հետեւէ նորա ընթացքին և տեսնէ որքան է կարողանում տեսուչն առաջնորդել իւրեան յանձնուած գործն և հիմնադրի ու նպատակին հասցնել և իրազօրծել Նորին Վեհափառութեան ու անկապութիւններն ի տրիտուր իւր անընդհատ և սրտագին իննամածութեան:

Տեսչի բանախօսութիւնից և բարեմաղթութիւններից յետոյ կրկին երգեցին և ապա Նորին Բարձր Սրբազնութիւնը մի քանի խօսքերով հաստատեց նորա ասածներն, աւելացրեց մի քանի զեղեցիկ քաջարեականներ և իմաստալից արտայայտութիւններով օրհնեց թէ այդ անդաստանն և թէ նորա մէջ սրտանուէր գործողներին:

Հանդէսը վերջացաւ մի քանի երգերից յետոյ:

Երեկոյեան 6 1/2 ժամին սկսուեց մի զեղեցիկ լուսավառութիւն. զոյնզոյն լապտերներն ու մոմերը կանթեղներն ու ճրագները, դրօշակներն ու դրասանգները զարդարում էին ձեմարանի ամբողջ հիւսիսային կողմը: Ճակատին, մուտքի կամարի տակ զեղեցիկապէս փայլում էր երջանկայիշատակ հիմնադրի պատկերը՝ զործ ձեմարանի նկարչութեան ուսուցիչ պ. Եղիշէ (Թադէոսեանցի): Պատկերի ստորև պայծառ կարգացում էին հետեւեալ վերտառութիւնները.

«Հաւատք, յոյս, սէր»

«Զայս պատուիրեմ զի սիրեջիք զմիմեանս»:
«Գնեցէք զժամանակն»:
«Հոգով եռացէք, Տեառն ծառայեցէք»:
«Այս է յաղթութիւնն, որ յաղթէ աշխարհին» հաւաքն մեր»:

ձեմարանի հարաւային բակում սաները մոգական լապտերով ցոյց էին տալիս զանազան պատկերներ ի ցոյց ժողովուած բաղմաթիւ ժողովրդի: Ահասարակ ժողովրդի բազմութեան թիւ չկար: Երգեցիկ խումբը երգում էր զանազան երգեր: Իսկ կտրից արձակում էին տեսակ տեսակ փամփուշաներ ի զուարճութիւն ականատեսների. այլ և բակում իրար հետեւում էին տեսակ տեսակ հրախաղութիւններ:

Այնուհետեւ կատարուեց ձեմարանի դահլիճում տեսչի և ուսուցիչների և այլ պաշտօնեաների մասնակցութեամբ մի ընտանեկան համեստ հանդէս: Մինչդեռ ամենքն էլ վայելում էին թէյ և մրդեղէն, ամբիոնից կարդում էին ծառեր, ոտանաւորներ և ծիծաղաշարժ առակներ, իսկ ամեն մի միջոցին երգում էին մի քանի ձեռներեցների նուագածութեան աջակցութեամբ: Ուսուցիչներից խօսեց պ. Մ. Բերբերեանը՝ բարձրացնելով ուսման յարգն, և պ. Կ. Յովհաննիսեանը կարդաց մի զեղեցիկ ոտանաւոր: Պ. Մ. Բերբերեանը կարդաց և ձեմարանի նախկին սաների ուղարկած շնորհաւորութեան հեռագիրները, որոնք սակայն շատ քիչ էին՝ համեմատելով մինչև այժմ ա-

ւարտածներն թուի հետ: Կարճ և ազդու էր թաւրիցից ուղարկածը՝ «երկար օրեր Մայր ձեմարանին» բովանդակութեամբ:

Տեսուչը խօսեց մի քանի անգամ առաջարկելով նախ Մորին Վեհափառութեան կենացն, որ որոտընդոստ կեցցէներով ուղեկցուեց, և ապա Ս. Էջմիածնի և միաբանութեան, ձեմարանի յարատեւութեան և ուսուցիչներին, որոնք կեցցէներով ընդունուեցան: Վերջին բանախօսութեան մէջ մի «առաջին խրատ» աւաց, այն՝ որ Քրիստոս հրամայել է՝ «Ձայս պատուիրեմ, զի սիրեսձիք զմիմեանս»: Ի վերջոյ խօսեց և նորընծայ Կարապետ արեղան, առաջարկելով տեսչի կենացը: Հանդէսը վերջացաւ ժամի 12-ին:

—

Միւս օրը՝ վարագայ Ս. Խաչի տօնին, որ Մորին Վեհափառութեան օծման օրուայ պատկերն է, եպիսկոպոսական ձեռնադրութիւն կար. արդէն շաբաթ օր առաւօտեան երգուեցըրել էին բարեշնորհ Վիւրեղ վ. Սրապեանին, Մակար ծ. վ. Բարխուդարեանին, Անանիա վ. Համադասպեանցին և Խորէն ծ. վ. Ստեփանէին: Ժամասացութեան սկսուելուն պէս Մայր Տաճարը լցուեց խուռն բազմութեամբ, այնպէս որ անհնար էր այլ ևս մանել ներս: Ժողովուրդըն ամեն կերպ աշխատում էր տեսնել Հայոց Եկեղեցու մեծ հանդէսներից այդ մէկը: Ձեռնադրութեան վիաներ էին Գեր. Յովհաննէս և Գեր. Գաւթեան եպիսկոպոսներն, որոնք բազմել էին սեղանի վրայ աջ ու ձախ: Խարտավիլակը Գեր. Գառնակերեանն էր, իսկ սարկաւազութիւն էին անում բարեշնորհ Ղ.Էռնդ և Գէորգ վարդապետները: Երբ խորանից ելնելով՝ եպիսկոպոսացուները չորէչոր դիմեցին դէպի սեղանը և բարձրացան 7 աստիճաններով, ներկայ եղողը մի տպաւորութիւն էր ստանում թէ որքան դժուար է այդ աստիճանները ծնկաչոք բարձրանալ, այնքան ծանր է և եպիսկոպոսական լուծը Քրիստոսի ճշմարիտ առաքեալի համար, և այդ երբէք չի կարող մոռանալ ոչ մի եպիսկոպոս:

Հայաստանեայց Ս. Եկեղեցու կարգով նախ քան

ձեռնադրութիւնը պէտք է լինի մէկ ձեռնադրուողի երգումն և մէկ ժողովրդի վկայութիւնը: Երգման մէջ արդէն խոստացել էին «անխոտոր և անսայթաք ընթանալ ի վարդապետութեան հաւատոյ և պատուիրանաց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ» թէ ըստ տեսականին և թէ ըստ ծիսից, լինել զործունեայ քարոյչ այդ ամենի անխախտ պահպանութեան, ցմահ հաւատարմութեամբ և կատարել հնազանդութեամբ ծառայել Ս. Էջմիածնին «ի ներքոյ իշխանութեան և հրամանաց» Ս. Լուսաւորչեան ներկայ և ապագայ Գահակալաց, «ոչ բնաւ անցանել անդ քան զսահման իշխանութեանն զոր տացէ Աստուած ի ձեռնադրութենէ յեպիսկոպոսութիւն», և «ոչ ձեռնադրել աշառութեամբ կամ կաշառօք ի քահանայութիւն կամ ի սարկաւազութիւն» և այլն:

Ապա մինչեւ ձեռնադրուողները Ս. Յովհաննէս սեղանումն էին, Գեր. խարտավիլակի հրաւիրմամբ մի առ մի վկայում էին համօրէն եպիսկոպոսների, սարկաւազների, դպիրների, ջահնկանների, երգմեցուցիչների, ընթերցողների, դռնապանների, սաղմոսագանների, այլ և իշխանների և աղքատների կողմից ձեռնադրուողների արժանիքը: Յետոյ ձեռնադրուողները հետզ հետէ, խոստացան կատարել Մորին Սրբութեան խրատներն և պատուէրները՝ շարունակ պատասխանելով ըստ որում և իրաւունք էին ստանում մի մի աստիճան բարձրանալ դէպի Ս. Ստեփաննոսի սեղանն, որտեղ բազմած էր Մորին Վեհափառութիւնն արժանավայել շքով: Այդ բոլոր պատուէրներն, որոնց համաձայն պարտաւոր են կենցաղավարել և զործել ձեռնադրուողները, վերաբերում են վարք ու բարքի, բնաւորութեան, առաքելական զործունէութեան, ձեռնադրական իրաւանց, կատարման Ս. Հարց հրամանաց, բարեգործութեան, հնազանդութեան, հաւատքի բոլոր մասերի և այլ պարտաւորութեանց: Գեղեցիկ է մանաւանդ հետեւեալ հարց ու պատասխանը. «Եղբայր, ճշմարտութեամբ եկիր յայս վաստակ»։—«Տէր՝ չեմ բաւական այսմ հնորհի, սակայն եղբարքն իմ ընտրեցին զիս»:

Երբ ստացան նմիփորոնը՝ որ նշան է «աւետարանական լծի»՝ հանդէսը փոքր ինչ յետոյ հեռեց Նորին Վեհափառութեան, որ բուրփառ տալով զիմուժէր զէպի աւագ սեղանը։ Այնտեղ շարունակեց պատարագն և կարդաց ձեռնադրութիւնների վրայ այն հրաշալի աղօթքներն, որով խնդրում է նոցա համար եպիսկոպոսական բոլոր շնորհները։ Վերջապէս մի քանի երգերից և ընթերցութեանց զինի Նորին Վեհափառութիւնը օծեց նոցա ճակատն և բոյթ մատերը, առաւ հովուական գաւազանն և մատանին և Աւետարան, որով և վերջացաւ իսկական ձեռնադրութիւնը «Ողջոյնի» ժամանակ։* Ժողովուրդը սկսաւ ցրուել միայն այն ժամանակ, երբ Նորին Վեհափառութիւնը վերջացնելով պատարագն, զնաց Վեհարան հանդստանալու։ Այնքան մեծ բազմութիւն կար սեղանատան, խօսեցան և կենացներ առաջարկեցին ու բարեմաղթութիւններ արին Բարձր Սրբազան Սեպարակ Աբեպիսկոպոսն ու Սրբազան Դառնակերեանը։

—

Միւս օրը ամսիս 26-ին պէտք է լինէր Նորին Վեհափառութեան Ս. օծման տարեգործի տօնը։ Առաւօտեան ժամից յետոյ հանդիսապէս կատարուեց Ս. Տաճարում միաբանական մաղթանք վաճն կենաց Նորին Օծութեան, որից յետոյ միաբանութիւնը զիմեց Վեհարան ի շնորհաւորութիւն։ Երբ ներկայացան, Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց խօսել հետեւեալը.

«Բարի եկիք։ Երեկուան պարտքը այսօր կկատարէք. պարտքեր վաղ թէ անաղան պէտք է կատարուին՝ թէև աշխարհիս վրայ մի և նոյն ժամանակ չեն կատարուիր։ Ամենքս ալ ունինք պարտքեր, երանի՜ թէ կարենայինք կատարել իւր ժամանակին, բայց առիթների, հանգամանքների կներկայանան և մենք չենք կարենար կատարել։

Շնորհաւորելու եկեր էք. ես կմտածեմ որ կշնորհաւորէք և հարց ալ կընէք, խօսքով

չէք ըսեր, բայց ես կը հասկընամ «Հայրիկ տարին բոլորեց, ի՞նչ ըրիք»։ Չեմ կրնար վրատահարար ըսել թէ շատ բան ըրի. առոր ալ մեծ պատճառ կար. եկաւ զաղթականաց խնդիր, որ անդադար հող պատճառեց ինձի. դեռ տակաւին կը խորհնք 5000 զաղթականներու համար և ինչ որ կարեոր դատեցինք, ըրինք։ Ասոնք մի Հայրապետի համար մեծ մտածողութեան առարկայ է։ Երբ միայնակ կը խորհիմ չեմ զիտեր՝ ի՞նչ պիտի լինի այսօր վախճան, կը խորհեմ և բաւ է, Տէր, կըսեմ բաւ է։ Տէրը պիտի օգնէ, հարկաւ. բայց ամենքս ալ պիտի մտածենք ազգի համար, զո՞չ չենք այս վիճակէն ամենքս ալ։

Ահա կը նայինք մեր շուրջ, Ս. Լժմիածնի շինութիւններ աւերակ մնացեր են, այդ աւերակներ կշինենք, ի՞նչ ընենք, զանձարանէն կծախսենք, կշինենք և հետզհետէ ամեն բան կգայ կուղղուի. Աստուած պահէ ժողովուրդը. այս հեշտ է։ Կըմնայ մի բան, որ այնչափ հեշտ չէ. վանքի աւերակներ կըշինուին, մեր սրտերու աւերակներն են որ կմնան. այդ ալ պէտք է շինուի։ Ամենայն միաբան պէտք է աշխատի իւր սրտի աւերակներ շինելու, ինքն պէտք է աշխատի։ Սրտեր ամեն ժամանակ կրնան աւերակ դառնալ. առիթներ շատ են, առիթներ կը զան դրսէն, առիթներ կը զան ներսէն և կը քանդեն մեր սրտեր. բայց եթէ ունենանք Աւետարան մեր ձեռքը, այն միայն կը շինէ մեր սրտերու աւերակները։

Ամենայն մարդ իւր ընկերին կըսէ քաղցր խօսք մը, կուղղէ, բայց չի կարենար շինել աշուր սրտի աւերակը. այդ միայն Աւետարանը կը շինէ։ Եթէ դուք չաշխատիք ձեր սրտերու աւերակներ շինել, ես միայն ի՞նչ ընեմ։ Շատ անգամ ըսեր եմ որ դուք իմ զործակիցներս էք, իմ թիկնապահներս էք. դուք ալ պէտք է զործէք ինձի հետ։ Քրիստոս ըսաւ իւր աշուրներէն՝ «առանց իմ ոչինչ կարէք առնել», ես ալ ձեզի կըսեմ որ ինձի հետ զործէք։ Կը տեսնաք, առաջ այստեղէն Ամբիկայ չէինք կրնար շուտով բան մը գրել. իրկայ չէինք կրնար շուտով բան մը գրել. այժմ այդպէս չէ, հեռազիր կայ, քանի մը

* Արարատի ընթերցողը կկարդան ձեռնադրութեանց էութիւնը հետեւեալ համաքննելով։

ժամուան մէջ կիսօսինք այնտեղին հետ. մենք ալ չենք կրնար բան մը ընել, որ ազդ չիմանայ և չտեսնայ. ժողովուրդ է, կասէ կիսօսի կը դրէ: Մենք ալ դիտենք ազդի վիճակ, այնպէս դործենք, որ մենք ալ դո՛հ լինինք, ազդն ալ: Աշխարհի մարդիկ են, առիթ կլինի խօսելու, բայց մենք աշխատինք որ առիթ չտանք: Ասոր համար պէտք է լսենք Քրիստոսի պատուէրը՝ «Զայս պատուիրեմ զի սիրեալիք զմիմեանս», ասոր պարտ է հետևել և աշխատել շինելու մեր սրտի աւերակներ: Հարկաւ ժամանակ պէտք է, աստուածային արարչագործութիւն չունինք, որ խկոյն ընենք, գործենք միշտ, ես ալ կաշխատիմ այս վանքի համար, որքան կրնամ: Այս վանք ազդի աչքն է, ազդի սիրան է. մեր նախնիք շատ են աշխատեր ասոր պահպանութեան համար և մեզի աւանդեր են, մենք ալ պէտք է աշխատինք անոր համար և թողունք մեր յաջորդներուն:

Կաղօթեմ, որ Աստուած տայ միաբանութեան ուղիղ սիրտ, մենք ալ պարտական չըմանք ազդի առաջ: Օրհնեալ լինիք»:

Միաբանութիւնից յետոյ ներկայացան Հոգ. ձեմարանի ուսուցիչներն ու սաները: Եկեղեցու զանգը տուին այդ միջոցին, այնպէս որ Մորին Վեհափառութիւնը ժամանակ չունեցաւ երկար խօսելու. դառնալով դէպի ուսուցիչները՝ խօսեց վերստին սրտերի աւերակաց մասին և յորդորեց աշխատել շինելու այդ աւերակները Ս. Աւետարանով: Նկատեց որ Իւր ասեկիքը յարմար առիթիւ կասէ, իսկ ուսուցչաց հետ առանձին պէտք է խօսի: Ապա շարունակեց.

«Դուք պէտք է աշակերտներուն ալ կրթէք, մարդ կծնի իրր մի գունդ միս, եթէ այնպէս թողունք առանց լոյսի, առանց կրթութեան, ոչինչ չի լինիր. երբ կը կրթենք, լոյսի մէջ կը զարգացնենք՝ մարդ կդառնայ: Այժմ այսոնք ալ կրթութեան կարօտ են, որ մարդ լինին և օգուտ բերեն ազգին և Եկեղեցուն: Ահազին ծախք կլինի ձեմարանի վրայ, որ կծանրանայ Ս. Իշմիածնի վրայ, կերթաք սեղանատուն և կուտէք, կկարծէք թէ ամեն

բան պատրաստի կելէ. բայց դիտէք թէ ինչպէս կհաւաքուի ժողովրդէն. դիւղէ դիւղ կը շրջին ժողովրդի մէջ, իւր, պանիր դդալ դդալ կժողովեն ձեզ կերակրելու համար. դուք պէտք է դիտնաք այլ և փոքր ինչ ալ սակաւապետութեան սովորիք, շատ պահանջող չլինիք: Միայն պէտք է շատ աշխատիք ուսում կըրթութիւն ստանալ, Ազգի և Եկեղեցու հաւատարիմ սպասաւոր լինիք: ձեմարան ամեն բան չի կրնար տալ. այն ճանապարհը կը ցուցնէ, որ դուք յետոյ աշխատիք և զարգանաք: Ուսուցիչներդ ալ պէտք է աշխատիք կարճ ճամբայ բռնել, երկար պտոյտներ չանել: Պ. Տէր Միւրաքեան մանկավարժութենէ պինդ կբռնէ: Կգրէք երկար երկար յօդուածներ բան մը չենք հասկընար: Ամեն օր նոր նոր ոճեր կը հնարեն յԵւրոպայ, բնաւ չեն կրնար համաձայնիլ: Դուք ալ ձեր գործ կերկարէք. դուք ալ ձեր փոլիթիքն ունիք:

Պէտք է կարճ ընել, ճանապարհը ցուցնել, մնացեալը ինքեանք կաշխատին:—Օրհնեալ լինիք»:

Գրոցանից յետոյ ներկայացան քահանաներ, ուսուցիչներ, պաշտօնեաներ և ուխտաւորներ, որոնց ևս Մորին Վեհափառութիւնը մխիթարեց կարճ բանախօսութիւններով և ամենքին օրհնեց:

Մոյն օրը պատարագիչն էր Գեր. Կիւրեղ Սրբազանն, որ և միաբանութեան մի ճաշ տըռուաւ: Ուրախալի անցաւ և այս, Սրբազանի կենացն առաջարկեց Գեր. Գառնակերեանն և յայտնեց միաբանութեան կողմից բարեմաղթութիւններ յաջող գործունէութեան: Մորընծայ Սրբազանն ևս մի հակիրճ և գեղեցիկ բանախօսութեամբ ակնարկ ձգեց առաջնորդական ծանր գործերի վրայ և յոյս յայտնեց, որ Մորին Վեհափառութեան բարեմաղթութեամբ ու միաբանութեան բարեխօսութեամբ անշուշտ կյաղթէ դժուարութիւնները: Իւր կողմից առաջարկեց Մորին Վեհափառութեան և յետոյ միաբանութեան կենացը:

Այսպէս՝ այս տօնական օրերը մեծ ուրախութեամբ անցան Ս. Իշմիածնում և ամեն մի հանգիստում միաբանութիւնն ուրախութեամբ օրհնում էր և Հայ ազգն ու ժողովուրդը և նորա կենացը բարեմաղթութիւններ անում:

Տեղի սղութեան պատճառով Մորին Վեհափառութեան Կոնդակաց և Ս. Սինոդի Օրագրութիւնների քաղուածքները մնում են հետևեալ համարին:

